

Պարադոքս

Ժամանակի սահմանափակում՝ 0.5 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Մի լավ հայտնի հումոր կա: Ասում են, եթե ինֆորմատիկայի ֆակուլտետի ամենափոքր IQ ունեցող ուսանողը տեղափոխվի բանասիրական ֆակուլտետ, ապա երկու ֆակուլտետների ուսանողների IQ-ների միջինը կբարձրանա:

Տրված են երկու ֆակուլտետների ուսանողների IQ-ները: Հարկավոր է հաշվել, թե ինֆորմատիկայի ֆակուլտետում քանի ուսանող կա, որոնց տեղափոխման դեպքում կատակը իրականություն կդառնա:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողների n ($1 \leq n \leq 100000$) քանակը: Հաջորդ տողում տրված են n ոչ բացասական ամբողջ թվեր՝ ուսանողների IQ-ները: Երրորդ տողում տրված է բանասիրական ֆակուլտետի ուսանողների m ($1 \leq m \leq 100000$) քանակը: Հաջորդ տողում տրված են m ոչ բացասական ամբողջ թվեր: IQ-ները 100 -ին չգերազանցող դրական ամբողջ թվեր են:

Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ այն ուսանողների քանակը, ովքեր կարող են բարձրացնել երկու ֆակուլտետների ուսանողների IQ-ների միջինը:

Օրինակ

Մուտք	Ելք
3 99 101 100	1
2 96 98	